

Եղի աղբեր լուրջիայի մէջ :

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊՈՎԵՐՔԵՍՎԻԼՔԱՂՔԻՆ
ՔՈՎԵՐԸ 1826ին արդուացի ջրհոր մը
կըփորէին որ աղի ջուր գտնեն . 200
ոտք խորութիւն հասնելէն ետև՝ ապա-
ռաժ քարի մը հանդիպեցան փորող-
ները . ան քարը ծակելուն պէս՝ մէյ-
մալ տեսնեն որ ջրի տեղ մաքուր եղ
ցատքեց տակէն՝ գետնին երեսէն 12
ոտնաչափ բարձր : Եշ թէպէտ ցատ-
քելուն սաստկութիւնը քանի գնաց
պակսեցաւ, բայց օրերով չդադրեցաւ
աղքիւրը : Ի՞ն ջրհորին քովերը ջրի
առու մը կայ՝ որ Վումպէրլանտ ա-
նունով գետը կըթափի . ուստի ան
նոր բխած եղը խառնուեցաւ ան ջրին
հետ, ու ինչուան հեռու տեղուանք
ջրին երեսը լողալով կըվազէր : Ի՞ն
կողմի բնակիչները ուղեցին փորձել
թէ աս նոր տեսակ եղը հասարակ
կուպրի կամ ձիւթի՝ պէս կըվառի
թէ չէ . առին ջահ մը մօտեցուցին
եղին, մէկէն բռնկեցաւ կայծակի
պէս, ու բոլոր գետը կարծես թէ
կրակ դարձեր կըվազէր . մէկ դիէն ալ
բոցը ինչուան թումբերէն վեր ու
ծառերուն վերի ծայրերը ելլելով ու
բռնկցընելով՝ շատ մեծ վախ ձգեց
բնակիչներուն սիրտը :

Իրաւցընէ աս եղը կամ կպրաձիւ-
թը խիստ դիւրավառ է, և լյսը ա-
նանկ մաքուր ու պայծառ է որ կազի
լյսէն տարբերուի չունի : Ի՞իկայ քա-
նի մը պատի տակառներու՝ մէջ գոցե-
ցին որ պահէն . տեսան որ քիչ մը ա-
տենէն առջինէն աւելի ջրի ու բարակ
եղեր է, և տակառներէն դուրս քա-
մուեր ելեր է, անանկ որ բան չէ մնա-
ցած անոնց մէջ : Ի՞նոր համար փայտէ
ամաններու մէջ խիստ դժուար կըպա-
հուի . անկէ զատ՝ այնչափ ցնդական է,
որ շատ անգամ նաւերու մէջ դրուած
ատենը կըճաթեցընէ զանոնք՝ թէ
որ ամաններուն մէջ սաստիկ գոցած

ըլլայ : Դոյնը կանաչ է, բայց օդ առ-
նելով աւելի թխագոյն կըլլայ . հոտը
անախորժ է, և համը սև ձիւթի՝
համին քիչ մը կընմանի :

Ի՞ս հանքային եղը երթոր ջրհան-
ներով՝ կըհանէին, երկար ատեն աղի
ջրին հետ մէկտեղ ելաւ . ասկէ յոյս
առին բնապատումները թէ աս օգ-
տակար աղքիւրը պիտի չհատնի, և
սկսան աւելի փորձեր ընել որ դիւրին
ու առատ հանեն, բայց ջանքերնին
անօգուտ ելաւ . վոզի միայն ատեն ա-
տեն կըթիւր : Ո եց տարուան մէջ եր-
կու անգամ հանդիպեցաւ որ առա-
տութիւն ժողվեցին . երկրորդ անգա-
մը սկսաւ 1835ին, յուլիսի չորսին,
գրեթէ 6 շաբաթ քշեց, ու քսան
պղտի տակառ եղ ելաւ . Եղին բխե-
լու ատենը խորուկէն ձայն մը կելլէ
որոտմունքի նման, ու ջրհանին վերի
կողմերը ջրին երեսը կըսկսի փայլվլ
անանկ որ կարծես թէ բոլոր ջրհորը
բռնկեր է :

Ի՞ս կարգէ դուրս գիւտին լուրը ի-
մաստնոց ականջը հասածին պէս
ձայն ելաւ թէ ան եղը զարմանալի
բժշկական զօրութիւններ ունի . ուս-
տի զանազան փորձեր ալ ըրին, ու
գէթ ոմանք հաստատեցին թէ իրաւ-
ցընէ օգտակար դեղ է հարբուխի,
բարակ ցաւի, աղեաց ցաւերու, դը-
ժուարամարսութեան, Ճեղքուածքի,
վէրքի, և ընդհանրապէս ամէն տե-
սակ մորթի հիւանդութեանց դէմ.
և անանկ զօրաւոր է որ վէրքի մը ցա-
ւը հինդ վայրկենէն կանցընէ կըսեն :

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԵՐԱՎԻԵՎԻ ՎԱՐԺԱՐԱԿԻՆԻ ՊԱՐԵՀԱՆ ՇԱԽ-
ԱԲԱՆ :

ՊԱՏՈՒԱՅԻ ԱՌԵՐԱՎԻԵՎԻ ՎԱՐԺԱՐԱԿԻՆԻ ՊԱՐԵՀԱՆ
ՐԱՆԻՆ ԱԼ ՏԱՐԵԿԱՆ ԲՆԱԿԱՆ ԱՐԵՎԱԿԱՆ ԱՐԵՎԱԿԱՆ
ՄԵՐՆԱԼԷՆ ԵՄԵ, ԱՆԳԵԱԼԱՄԱՆՈՒՆ 28ԻՆ